# Ագրոլրատու

ՄԱՐՏ 15 - 25 2014 Թ. ԹԻՎ 6 (2028)

ՏԱՄՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ


*ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

## «ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ»

Կառավարությունում տեղի է ունեցել «Գյուղական կարողությունների ստեղծում» և «Շուկայավարման հնարավորություններ ֆերմերներին» ծրագրերի ղեկավար խորհրդի հերթական նիստը: Խորհուրդը քննարկել և հաստատել է «Գյուղական կարողությունների ստեղծում» ծրագրի 2014 թ. տարեկան աշխատանքային նախագիծ-բյուջեի և գնումների պլանը: 2014 թ. ընդհանուր նախագիծ-բյուջեն կազմում է շուրջ 15 մլն ԱՄՆ դոլար: Այն ունի չորս բաղադրիչ՝ աջակցություն պտղի և ընկուզեղենի արտադրությանը, ենթակառուցվածքների զարգացում (գազամատակարարման և ջրամատակարարման աշխատանքներ 25 համայնքում), կառավարում և գյուղական ֆինանսավորում (այգեգործական վարկերի մշակում և տրամադրում):

... Ի գիտություն է ընդունվել 2013 թ. սեպտեմբերի 9-25-ը Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի Վերահսկողության առաքելության այցելության հուշագիր-հաշվետվությունը:

... Նիստում, ծրագրի շրջանակում, 25 համայնքում հաստատվել են գազամատակարարման, ոռոգման և ջրամատակարարման նախագծային աշխատանքների իրականացման համար՝ որակի և գնի հիման վրա անցկացված, խորհրդատուի ընտրության մրցույթի արդյունքները:

... Կառավարությունը նիստում հավանության է արժանացրել ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման, հաշվառման և գրանցման ծրագիրն ու հաստատել դրա կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը:

Որոշման նախագիծը նիստին ներկայացրել է ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը և ընդգծել ծրագրի կարևորությունը: Ըստ նախարարի՝ ծրագիրը կօժանդակի, միջազգային չափանիշներով սահմանված պահանջների ապահովմամբ, միջազգային շուկա մուտք գործելուն:

↳2

*ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ*

## ԳԱՐՆԱՆՆ ԸՆԴԱՌԱՋ

Դեռևս 2011 թվականին, ՀՀ նախագահի կողմից, գյուղատնտեսությունը հռչակվել էր գերակա ոլորտ: Նշվածին հաջորդեցին գյուղատնտեսության աջակցության մի շարք ծրագրեր, որոնց իրականացմամբ և ոլորտի տնտեսավարողների ջանքերով, վերջին տարիներին, գյուղատնտեսությունում գրանցվել է տնտեսական աճ: Մասնավորապես՝ 2013 թ. այն կազմել է 7.1 %, ընդ որում, աճ գրանցվել է ինչպես բուսաբուծության, այնպես էլ անասնաբուծության ճյուղերում: 2014 թ. հունվար ամսվա տվյալներով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, գրանցվել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի 1.7 % աճ: Ոլորտում առկա հիմնախնդիրներին, իրականացված և առաջիկայում իրականացվելիք ծրագրերին է անդրադառնում ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչության պետ Հրաչյա Ծպնեցյանը:

*- Պարոն Ծպնեցյան, տարիների փորձը ցույց է տալիս, որ գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստումը և միջոցառումների արդյունավետ իրականացումը կարևորագույն նախապայման են գյուղատնտեսական հողատեսքերի նպատակային և արդյունավետ օգտագործման համար: Գյուղատնտեսության նախարարության կողմից ի՞նչ ծրագրեր են իրականացվում գարնանացանը կազմակերպված անցկացնելու ուղղությամբ:*

- Գարնան գյուղատնտեսական աշխատանքների արդյունավետ իրականացման համար կարևորվում է գյուղատնտեսական, հատկապես՝ հացահատիկային և կերային մշակաբույսերի բարձրորակ սերմացուներով ապահովվածության խնդիրը: 2013 թվականին, 2014

↳3



Ֆոտո ԳԱՀԿ

*ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ*

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Ջովաննի Ռիչուլիին:

Շնորհավորելով դեսպանին պատասխանատու պաշտոնում նշանակվելու կապակցությամբ՝ նախարարը հույս է հայտնել, որ նրա ջանքերով հայ-իտալական հարաբերությունները, մասնավորապես՝ գյուղատնտեսության բնագավառում, կհասցվեն զարգացման նոր մակարդակի:

Հանդիպման ընթացքում նախարարը հակիրճ ներկայացրել է ոլորտի ներկա վիճակը, զարգացման միտումներն ու ռազմավարական ծրագրերը: Առաջնահերթությունների շարքում նա կարևորել է գյուղացիական տնտեսությունների խոշորացման, գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման, պետական աջակցության ծրագրերի իրականացման, սննդամթերքի անվտանգության, կարողությունների ուժեղացման, վերամշակման ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման հարցերը:

Դեսպան Ռիչուլլին, գյուղատնտեսության բնագավառում համագործակցությունը ավելի խորացնելու նպատակով, համագործակցության հնարավոր ուղղություններ է համարել իտալական կողմի աջակցությամբ ագրոպարենային ապրանքների ծագման աշխարհագրական անվանումների հաստատման, երկու երկրներում կազմակերպվող ցուցահանդեսներին և տոնավաճառներին բիզնես համայնքների մասնակցության հարցերը:

Գյուղատնտեսության բնագավառում հայ-իտալական համագործակցությունը որակապես նոր հիմքերի բարձրացնելու համար, նախարար Սերգո Կարապետյանն առաջարկել է քննարկել երկու երկրների միջև գյուղատնտեսության բնագավառում համագործակցելու մասին համաձայնագիր ստորագրելու հարցը:

*ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ*

## ՆՈՐ ՍՈՐՏԻ ԸՆԿՈՒՅԶԻ ԱՅԳԻՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարարի հետ վերջերս կայացած հանդիպման ժամանակ Հայաստանի Հանրապետությունում Լիբանանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ժան Մաքարոնը, խոսելով վերջին շրջանում լիբանանցի գործարարների կողմից Հայաստանի գյուղատնտեսության նկատմամբ ցուցաբերած ակտիվության մասին, Ս. Կարապետյանին էր ներկայացրել լիբանանյան կազմակերպություններից մեկի կարծիքը, համաձայն որի, Հայաստանում կարելի է զբաղվել ընկույզի մշակությամբ:

Օրերս ՀՀ գյուղատնտեսության նախարարը կրկին հյուրընկալել էր դեսպան Ժան Մաքարոնին՝ «Գարդենիա Լեբնիզ Ֆարմս» ՍՊԸ-ի տնօրեն Նիկոլա Աբու Ֆեյսալի և նույն կազմակերպության ներկայացուցիչ Ժամիլ Աբդեհիմի հետ միասին: Գյուղատնտեսության ոլորտում մասնագիտացած «Գարդենիա Լեբնիզ Ֆարմս»-ի արտադրանքն արտահանվում է աշխարհի ավելի քան 40 երկրներ: Ցանկանալով ներդրումներ կատարել նաև Հայաստանի գյուղատնտեսության մեջ, ընկերությունը մտադիր է ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի տարածաշրջանում հիմնել «Պեկան» ամերիկյան սորտի ընկույզի այգիներ:

Հյուրերը տեղեկացրել են նախարարին, որ վերը նշված նպատակի համար Կոտայքի մարզում արդեն ընտրված է մոտ 20 հա հողատարածք, և նախապատրաստական աշխատանքներ են կատարվում ԱՄՆ Կալիֆորնիայի նահանգից ներկրվող տնկիների առաջին ծառատունկը կազմակերպելու համար: Հյուրերը հայտնել են նաև, որ առաջիկայում Լիբանանում թողարկված իրենց արտադրանքը կհայտնվի նաև Հայաստանի խանութներում (ձիթայուղ, համեմունքներ, հտիկաընդեղեն և այլն ):

Նախարարն իր գոհունակությունն է հայտնել լիբանանցի գործարարներին՝ Հայաստանում գործունեություն ծավալելու համար և խոստացել, ըստ ամենայնի, աջակցել վերջիններիս գործունեությանը:

*ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ*

# ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

***Գյուղատնտեսական նախորդ տարվա արդյունքների ամփոփման, ընթացիկ տարվա խնդիրների քննարկման, մարզի գարնանային առօրյային ու հոգսերին ծանոթանալու նպատակով, աշխատանքային այցով Վայոց ձորում էր ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը:***



Գյուղատնտեսության ոլորտի ներկայացուցիչների հետ առաջին հանդիպումը մարզխորհրդի նիստի ընթացքում էր: Նախարարը, ամփոփումների և առաջիկա անելիքների մասին ունեցած իր ելույթից բացի, հանգամանորեն ծանոթացել է նաև մասնակիցների կողմից ներկայացված հարցերին՝ խոստանալով հնարավորինս օժանդակել վերջիններիս լուծմանը: Նախարարը համայնքների ղեկավարների ուշադրությունը հրավիրել է հատկապես անհանգստացնող այն խնդրի վրա, որ վարելահողերի նպատակային օգտագործման մարզային ցուցանիշն ամենացածրն է հանրապետությունում: «Եթե հանրապետությունում օգտագործվում է վարելահողերի 72 տոկոսից ավելին, ապա Վայոց ձորի մարզում նույնքան է չօգտագործվող վարելահողերի տոկոսը: Անհրաժեշտ է լրջորեն մտածել կարևոր այս ցուցանիշի բարելավման և վիճակը կայունացնող քայլեր ձեռնարկելու մասին: Մանավանդ, որ առջևում գարնանացանն է, և ներկայումս ընթանում են հանրապետություն ներկրված բարձրորակ սերմացուների և պարարտանյութերի բաշխման աշխատանքները»,- հանձնարարել է նա:

Անդրադառնալով գյուղացիների կողմից բարձրացված մթերումների խնդրին՝ նախարարը նշել է, որ անցյալ տարի, հիմնականում պայմանագրային հիմունքներով աշխատելու շնորհիվ, որոշակի դրական առաջընթաց է ապահովվել՝ ինչպես մթերումների, այնպես էլ՝ դրանց դիմաց կատարվող վճարումների գործընթացներում: Սակայն, այդ ոլորտում դեռևս թերություններ կան, որոնց լուծման ճանապարհներից մեկը մարզում գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումն է համարել: Հատկապես կարևորվել է խաղողագործական կոոպերատիվի ստեղծումն Աղավնաձոր համայնքում: «Առաջիկայում մարզպետի հետ անդրադառնալու ենք այդ խնդրին»,- ասել է Սերգո Կարապետյանը: Անդրադարձ է եղել նաև պետական միջոցներով մարզում կառուցված սպանդանոցի կարևորությանը, որը շահագործման կհանձնվի առաջիկայում:

Այնուհետև, նախորդ տարվա լավ աշխատանքի ու բարձր արդյունքների համար, նախարարը «Գյուղատնտեսության նվաճումների» ոսկե մեդալներով պարգևատրել է Ռինդ և Վերնաշեն համայնքների այգեգործներ՝ Հ. Սահակյանին և Ա. Բաղդասարյանին: Մարզի գյուղատնտեսության ևս 10 առաջավորներ արժանացել են գյուղատնտեսության նախարարության շնորհակալագրերի:

Օրվա երկրորդ կեսին նախարար Սերգո Կարապետյանը, մարզպետ Էդգար Ղազարյանի ուղեկցությամբ, այցելել է «ԱՐԻԴ» այծաբուծական տնտեսություն, եղել «ԳՈԼԴԵՆ ԳՈՈՒԴ» կաթի վերամշակման գործարանում, ծանոթացել արտադրությանն ու զրուցել աշխատակիցների հետ:

*ՆՈՐ ԾՐԱԳԻՐ*

# ԻՆՏԵԳՐՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում ՀՀ գյուղատնտեսության նախարարության, Արագածոտնի, Շիրակի մարզպետարանների, ինչպես նաև շահագրգիռ այլ կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած հանդիպմանը քննարկվել է «Հողերի էրոզիայի ինտեգրված վերահսկողություն՝ Հարավային Կովկասի լեռնային տարածքներում» ծրագիրը:

Ծրագիրը Հայաստանում նախատեսվում է իրականացնել 2014-2016 թթ.-ին՝ GIZ/ADA և ՀՀ կառավարություն համագործակցությամբ: Այն նպատակ ունի, համակարգված միջոցառումների միջոցով, հաղթահարել հողերի էրոզիան և դեգրադացիան՝ պահպանելով կենսաբազմազանությունը:

Տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանը կարևորել է ծրագրի իրականացումը՝ ընդգծելով հատկապես դրա նշանակությունը բարձր լեռնային շրջաններում հողային պաշարների բարելավման և արդյունավետ կառավարման տեսանկյունից:

Ծրագիրը նախատեսում է երկու մարզում ուսումնասիրել և գնահատել հողերի էրոզիան և ռիսկերը, այնուհետև, դրանց հիման վրա, մշակված միջոցառումների ծրագրով, նպաստել հողաշերտերի վերականգնմանն ու դրանց արդյունավետ օգտագործմանը:

Ծրագրի համակարգողների կարծիքով, այն ենթադրում է ոչ միայն տեխնիկական գործողությունների իրականացում, այլև՝ իրավական, ինստիտուցիոնալ բարեփոխումներ և նոր տեխնիկական լուծումներ:

*1 ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

# «ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ»

Դեռևս 2012թ. վերջին ՀՀ վարչապետի որոշմամբ, խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման, գրանցման և անձնագրավորման ծրագիր է իրականացվել ՀՀ Վայոց ձորի մարզում:

Ծրագրի շրջանակում մշակվել է «ԱՆԻ ՊԱՍ» համակարգը, որը հնարավորություն է տալիս մուտքագրել և վերլուծել կենդանու և դրա առողջության վերաբերյալ տեղեկություններն ու պահպանել դրանք: Մշակվել են համակարգից օգտվելու ուղեցույցը, փյալների գրանցման մատյանները, միասնական ձեռնարկը: «ԱՆԻ ՊԱՍ» համակարգ է մուտքագրվել մարզի կենդանիների ամբողջ գլխաքանակը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության առաջարկով ՀՀ կառավարությունը որոշել է ծրագիրն իրականացնել ամբողջ երկրում: Իբրև սկիզբ՝ ենթադրվում է ձեռք բերել կենդանու ականջապիտակը, դակող գործիքը, անձնագիրը, գրանցամատյանները, փյալների պահման սերվերը, համայնքներում նշանակել սպասարկող անասնաբույժներ և կնքել աշխատանքային պայմանագրեր:

*ՌՌՈԳՈՒՄ*

# ՈՐՈՇՈՒՄ՝ ԱՐԱԳԱՀՈՍ ՋՐԱՏԱՐԻ ՀԱՄԱՐ

Արագածոտնի մարզի Կարբի և Օհանավան համայնքների բնակիչների հետ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանի օրերս կայացած հանդիպման արդյունքների վերաբերյալ զեկուցել են ՀՀ նախագահին և վարչապետին:

ՀՀ նախագահի հանձնարարությամբ, համայնքների բնակիչների հետ հանդիպում է ունեցել Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը և տեղեկացրել, որ կառավարությունը խրախուսելու է համայնքային զարգացման միայն այն ծրագրերը, որոնք գյուղատնտեսությամբ զբաղվելու հարցում խոչընդոտներ չեն ստեղծում, ուստի, հաշվի առնելով ծրագրի արդյունավետության վերաբերյալ բնակիչների մտահոգությունները, որոշվել է կասեցնել արագահոս դոտացիոն ջրատարի շինարարական աշխատանքները: Բնակիչներին առաջարկվել է՝ առանց որևէ անհանգստության, ձեռնամուխ լինել նախատեսված գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը:

Միաժամանակ՝ ՀՀ նախագահը փոխվարչապետին հանձնարարել է համապատասխան աշխատանքներ իրականացնել տարածաշրջանի համայնքների ղեկավարների հետ՝ ոռոգման համակարգին առնչվող մտահոգությունները համապարփակ կերպով քննարկելու և, անհրաժեշտության դեպքում, համապատասխան լուծումներ առաջարկելու համար:

*ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

# ՆՊԱՏԱԿԸ՝ ՏՈՀՄԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆ Է

Ընթացիկ տարում կարևորվելու է գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման աշխատանքների ծավալների ընդլայնումը, որը տոհմային և մթերատու հատկանիշների բարելավման կարևոր նախադրյալներից է:

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում, Արագածոտնի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում կստեղծվեն անհրաժեշտ սարքավորումներով և նյութերով հագեցած անասնաբուժական սպասարկման կենտրոններ: Ուսուցում անցած և վերապատրաստված 87 անասնաբույժներ կձևավորեն անասնաբուժական ասոցիացիաներ, որոնք, գործելով սպասարկման կենտրոններում՝ արհեստական սերմնավորման ծառայություններ կմատուցեն անասնապահական տնտեսություններին:

Հանրապետության անասնապահության ոլորտում առաջնակարգ մասնագետների հետ քննարկումների արդյունքներից ելնելով, անհրաժեշտ է համարվել «Տավարաբուծության զարգացման ծրագրի» շարունակումը: Այս առումով կարևորվել է տոհմային երինջների մատակարարման մեխանիզմների կատարելագործումը, ինչպես նաև տեղական ֆերմերներից, ծրագրի շրջանակներում, տոհմային կենդանիների գնումների իրականացումը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի Անասնաբուծության և անասնաբուժության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանը նշեց, որ անասնաբուծությունում հիմնավորված քաղաքականության իրականացմանը և անասնաբուժական միջոցառումների լիարժեք կատարմանը կնպաստի ընթացիկ տարում նախատեսվող «Անասնագլխաքանակի համարակալման, հաշվառման և անձնագրավորման ծրագրի» իրականացումը:

Գյուղատնտեսական համատարած հաշվառման փորձնական ծրագիր իրականացվել է նախորդ տարի՝ Վայոց ձորում՝ ներառելով մարզի գյուղական բոլոր համայնքներում, իսկ հիմնական ծրագիրն իրականացվելու է 2014 թվականի աշնանը:

Նելլի Սահակյան

Ագրոլրատու
Մարտ 15 - 25, 2014 թ.
Թիվ 6 (2028)

1 ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

# ԳԱՐՆԱՆՆ ԸՆԴԱՌԱՋ



թվականի բերքի համար, աշնանացան է կատարվել 105.3 հազ. հա տարածության վրա, որը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը՝ 5.1 %-ով կամ 5200 հա-ով: Ընթացիկ տարվա բերքի համար կարևոր նշանակություն կունենա «2010-2014 թվականների ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման» ծրագիրը: 2013 թվականին աշնանացանի համար Ռուսաստանի Դաշնությունից ձեռք է բերվել 440 տոննա էլիտային վերարտադրության սերմացու, ինչպես նաև տեղական սերմարտադրողներից հետ վերադարձվող և գնվող էլիտային ու առաջին վերարտադրության 3809 տոննա աշնանացան ցորենի սերմացուի հաշվին, բավարարվել է մարզերից ստացված հայտերի ամբողջ պահանջարկը: Սերմնաբուծության զարգացման ծրագրերի իրականացման արդյունքում, նախատեսվում է 2018 թվականին հանրապետությունում արտադրել 5500 տոննա էլիտային վերարտադրության սերմացու:

Գարնանացան մշակաբույսերի ցանքերի կազմակերպման համար կարևոր է նաև «2014 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի» իրականացումը: Ծրագրի շրջանակներում Ռուսաստանի Դաշնությունից ներկրվում է 1978.7 տոննա գարնանացան գարու առաջին վերարտադրության, 168 տոննա առվույտի, 190 տոննա կորնգանի և 23.5 տոննա եգիպտացորենի սերմացու: Տեղական սերմարտադրողներից գնվելու է 150 տոննա էլիտային վերարտադրության գարնանացան գարու սերմացու: Ծրագրի իրականացմանն է ուղղվել 1 միլիարդ 218 միլիոն դրամ: Մարզերում սկսվել են սերմերի մատակարարման աշխատանքները:

Արտերկրից ներկրված և տեղական սերմարտադրողներից գնված սերմացուի 1 կիլոգրամը հողօգտագործողներին, պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով, հատկացվում է պետության կողմից ձեռքբերված արժեքից ավելի ցածր գներով: Սուբսիդավորման գումարը, ընդհանուր առմամբ, կազմում է 412.5 մլն դրամ, արդյունքում՝ գյուղացիները սերմերը ստանում են շուկայականից շուրջ 35 %-ով ցածր գներով: Նշված ծավալով սերմացուի հատկացումը հնարավորություն կտա գարնանացան իրականացնել շուրջ 19.5 հազ. հա տարածության վրա:

Առաջնային սերմնաբուծության և սերմապահովության բնագավառում վերջին տարիներին իրականցված ծրագրերն էականորեն նպաստեցին հացահատիկային մշակաբույսերի, հատկապես ցորենի արտադրության ծավալների և ինքնաբավության մակարդակի բարձրացմանը: Հացահատիկային մշակաբույսերի ծավալները 2013թ. գերազանցեցին նախորդ տարվա մակարդակը՝ 20.3, իսկ ցորենինը՝ 28.2 %-ով: Վերջինիս արդյունքում, ցորենի ինքնաբավության մակարդակը 2013 թվականի համար, գնահատվում է շուրջ 47.0 %՝ 2012 թվականի 32.9 %-ի դիմաց:

*- Դիտարկումները ցույց են տալիս, որ 2014 թվականին զգալիորեն ավելացել է բանջարաբոստանային մշակաբույսերի, հատկապես՝ տեղական սերմերի պահանջարկը: Ի՞նչ աշխատանքներ են տարվում այն բավարարելու ուղղությամբ:*

- Բանջարաբոստանային մշակաբույսերի սերմերի արտադրությամբ հանրապետությունում հիմնականում զբաղվում են գյուղատնտեսության նախարարության «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնը», ինչպես նաև մասնագիտացված գյուղացիական տնտեսությունները: Ընթացիկ տարում գիտական կենտրոնի կողմից ավելացել են հանրապետության գյուղացիական տնտեսություննններին մատակարարվող բանջարաբոստանային մշակաբույսերի սածիլների և սերմերի ծավալները և 2013 թվականի ցուցանիշները կգերազանցվեն ավելի քան 4 անգամ: Առաջիկա խնդիրներից է, մասնավոր սերմարտադրողների ներգրավմամբ, տեղական սերմարտադրության և օգտագործման ծավալների էական ավելացումը:

Վարելահողերի նպատակային օգտագործման ուղղությամբ վերջին երեք տարիներին գրանցվել են էական դրական փոփոխություններ, ցանքատարածությունները ավելացել են գրեթե 35.0 հազ. հա-ով: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը 2013թ. կազմել է 71.0 %՝ 2010 թ. 63.2 %-ի դիմաց, սակայն խնդիրը դեռևս առկա է, և առաջիկա քաղաքականությունը նպատակաուղղվում է դրա աստիճանական լուծմանը:

Սերմնաբուծության և սերմապահովության ծրագրերի հիմնախնդիրներից է սերմերի դիմաց վճարումների ոչ լիարժեք իրականացումը: Մասնավորապես՝ 255 շահառուներից վճարումները չեն իրականացրել 95 շահառու: Նշված ծրագրերը շարունակական են և գումարների չհավաքագրումը խոչընդոտում է առաջիկա ծրագրերի արդյունավետ իրականացմանը:

*- Ի՞նչ կասեիք «Հողօգտագործողներին 2014 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրի» վերաբերյալ:*

- Ծրագրի շրջանակներում ներկրվելու են 33121 տոննա ազոտական, 2645 տոննա ֆոսֆորական և 1619 տոննա կալիումական պարարտանյութեր և, առկա 700.6 տոննա ազոտական պարարտանյութի հետ միասին, շուկայականից էականորեն ցածր գներով, հատկացվելու են հանրապետության հողօգտագործողներին: Ընդ որում, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերը վերջին տարիներին ներկրվում են առաջին անգամ: Ծրագրի իրականացմանն է ուղղվել 1 միլիարդ 829.7 միլիոն դրամ սուբսիդիա: Պարարտանյութերի մատակարարման աշխատանքները հանրապետության մարզեր արդեն սկսվել են:

Գարնան գյուղատնտեսական աշխատանքների ագրոտեխնիկական ժամկետներում իրականացման համար կարևորվում է նաև «Հողօգտագործողներին 2014 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագիրը, որի շրջանակներում՝ գյուղական համայնքներում հանրապետության հողօգտագործողներին տրամադրվելու է 17 միլիոն 640 հազար լիտր դիզելային վառելանյութ: Ծրագրի իրականացմանն է ուղղվել 1 միլիարդ 260 միլիոն դրամ սուբսիդիա: Դիզելային վառելանյութի մատակարարման աշխատանքները նույնպես սկսվել են:

*- Գյուղացիական տնտեսությունների կայունության համար առանձնակի կարևորվում է վարկերի մատչելիության բարձրացումը: Շարունակվելու՞ է վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը:*



- Ծրագիրը սկսվել է դեռևս 2011 թվականից և, մինչև 2013 թվականի տարեվերջ, տրամադրվել են 54.7 մլրդ դրամի, 63 հազ. միավոր տոկոսադրույքի սուբսիդավորմամբ, վարկեր: Սուբսիդավորման գումարը կազմել է 1 միլիարդ 526 միլիոն դրամ: Ինչ խոսք, ծրագիրը շարունակվելու է նաև 2014 թվականին, ՀՀ պետական բյուջեով վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման համար հատկացվել է 872.5 մլն դրամ: Ընդհանուր առմամբ, վերը նշված ծրագրերով, 2014 թվականին սուբսիդավորման գումարը կազմում է 4 միլիարդ 375 միլիոն դրամ:

*- Նախարարության ընթացիկ տարվա կարևորագույն խնդիրներից է Արարատյան հարթավայրում և նախալեռնային գոտում մորմազգի մշակաբույսերի ցեցի դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների կազմակերպումը: Ի՞նչ է արվելու «Բույսերի պաշտպանության միջոցառումների ծրագրի» իրականացման ուղղությամբ:*

- Նախարարությունում քննարկվել է կարտոֆիլի և լոլիկի ցեց վնասատուների դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների կազմակերպման՝ ֆերոմոնային թակարդների օգնությամբ, մոնիթորինգի իրականացման հնարավորության հարցը, որը մասնագետներին հնարավորություն կտա ոչ միայն ճշգրիտ որոշելու վնասատուի դեմ պայքարի հստակ ժամկետներն, այլև մասնագիտական խորհրդատվություն տալ տնտեսավարողներին՝ ինչպես պայքարի ժամկետների, այնպես էլ տվյալ փուլում նախընտրելի թունաքիմիկատների և դրանց չափաքանակների ու կիրառման եղանակների վերաբերյալ:

Ագրոտեխնիկական պահանջներով պարարտանյութերի օգտագործման և երաշխավորված բերքատվության ապահովման նախադրյալների ստեղծման համար կարևորվում է նաև «Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծրագիրը»: 2014 թվականին ուշադրության կենտրոնում կլինեն Արմավիրի մարզում կարկտահարության հետևանքների մեղմմանն ուղղված աշխատանքները:

ԱՆԱՍՆԱԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## Անասնահամաճարակային վիճակը բավարար է

ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության տվյալներով, ներկայումս հանրապետությունում անասնահամաճարակային իրավիճակը կայուն է: 2014 թվականի հունվարի 1-ից առ այսօր հանրապետությունում կենդանիների, կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների բռնկումներ չեն արձանագրվել:

Ելնելով տարածաշրջանում կենդանիների վարակիչ հիվանդությունների բարդ համաճարակային և հանրապետության առանձին մարզերի կենդանիների վարակիչ հիվանդությունների համաճարակային իրավիճակից, յուրաքանչյուր տարի իրականացվում են հակաանասնահամաճարակային միջոցառումներ՝ խոշոր եղջերավոր կենդանիների (ԽԵԿ)՝ բրուցելոզ, տուբերկուլյոզ, սիբիրախտ, պաստերելյոզ, խշխշան պալար, մանր եղջերավոր կենդանիների (ՄԵԿ)՝ բրադզոտ, ԽԵԿ և ՄԵԿ դաբաղ, ԽԵԿ խոզերի դասական ժանտախտ, թռչունների Նյու-Քասլ և մեղուների վարրոատոզ հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ:

2014 թվականի 1-ին եռամսյակում, Հայաստանի Հանրապետությունում, «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստումների» ծրագրի շրջանակներում, վերոնշյալ հիվանդությունների դեմ պատվաստումներ և ախտորոշիչ միջոցառումներ իրականացնելու նպատակով, ներմուծվել են կանխարգելիչ և ախտորոշիչ անասնաբուժական դեղամիջոցներ:

«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում կատարվելիք կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ համայնքային անասնաբույժների միջոցով:

«Ներկայումս հանրապետության բոլոր մարզերում գյուղատնտեսական կենդանիների նկատմամբ իրականացվում են հակաանասնահամաճարակային կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումներ՝ համաձայն նախատեսված ժամանակացույցի»,- նշեց վարչության անասնաբուժության բաժնի պետ Գագիկ Վարդանյանը:

Էջի նյութերը պատրաստել է Նելլի Սահակյանը

Ագրոլրատու
Մարտ 15 - 25 , 2014 թ.
թիվ 6 (2028)


**ԳՅՈՒՂՏԵԽՆԻԿԱՆ ՊԱՏՐԱՍՏ Է**

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ՝ ԳԱՐՆԱՆՆ ԸՆԴԱՌԱՋ



***ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության կողմից գյուղացիական տնտեսություններին և գյուղատնտեսական արտադրություն վարող սուբյեկտներին մատուցվում են բազմաթիվ ծառայություններ: Խոսելով ոլորտում մատուցվող ծառայությունների, հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և դրանց առնչվող հարցերի մասին, ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղտեխնիկայի պետական տեսչության պետ պարոն Վ. Ղուշչյանը նշեց, որ «ՀՀ գյուղատնտեսության նախարարության վարչական վիճակագրական ռեգիստրի առաջին փուլի վարման կարգը և գյուղատնտեսական վարչական վիճակագրական ռեգիստրի հաշվետվության ձևը հաստատելու մասին» N 167-Ն հրամանի համաձայն, գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության կողմից յուրաքանչյուր տարի իրականացվում է հանրապետության գյուղատնտեսական տեխնիկայի ու գործիքների հաշվառում և սարքինության վիճակի ուսումնասիրում:***

Արդյունքում՝ 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ, առկա են տրակտորներ՝ 14782 հատ, հացահատիկահավաք կոմբայններ՝ 1355 հատ, տրակտորային կցասայլեր՝ 6099 հատ, տրակտորային խոտհնձիչներ՝ 2030 հատ, կերահավաք կոմբայններ՝ 376 հատ, մամլիչ-բարդոձիչներ՝ 1575 հատ, հատիկազտիչ մեքենաներ՝ 427 հատ, տրակտորային շարքացաններ՝ 1856 հատ, տրակտորային գութաններ՝ 3843 հատ, կուլտիվատորներ՝ 2244 հատ, որոնց սարքինության մակարդակը կազմում է, միջին հաշվով, 79 %:

Նշված տեխնիկայի շուրջ 93%-ը Խորհրդային Միության արտադրության են՝ բարոյապես և ֆիզիկապես մաշված (1976-1991թթ. արտադրության), իսկ մնացած 7%-ը՝ դրամաշնորհների և այլ միջոցների հաշվին ներկրված:

Պարոն Ղուշչյանը հավելեց, որ 2013 թվականին, ՀՀ կառավարության N 588 որոշմամբ, հանրապետություն են ներկրվել և ՓՄՁ ԶԱԿ-ի միջոցով, ուղղակի վաճառքի ու լիզինգային եղանակով, տնտեսավարող սուբյեկտներն և անհատներին են վաճառվել 120 հատ «ՄՏԶ 82.1» մակնիշի տրակտորներ, 20 հատ հավաքիչ-մամլիչներ, 20 հատ կուլտիվատորներ, 40 հատ գութաններ, 34 հատ կարտոֆիլատնկիչներ և կարտոֆիլաքանդիչներ, 16 հատ շարքացաններ: Տրակտորների ուղղակի վաճառքի միջոցով իրացման գինը եղել է 6.7 մլն դրամ, իսկ լիզինգով՝ տարեկան 9% տոկոսադրույքի՝ ներառյալ ռիսկերի ապահովագրումը, կանխավճար՝ գնի 20%-ի չափով, առավելագույն ժամկետը՝ տրակտորների համար՝ 6 տարի, իսկ հարակից սարքերի համար՝ 3 տարի: 2014 թ. գարնանը հանրապետություն է ներկրվել ևս 100 միավոր «ՄՏԶ 82.1» մակնիշի տրակտոր, վաճառքի գինը՝ 7 մլն դրամ:

Իսկ թե ինչպե՞ս և որտե՞ղ են իրականացվում գյուղտեխնիկայի տեխզննման և նորոգման աշխատանքները, պարոն Ղուշչյանը նշեց, որ հիմնականում տեխնիկայի նորոգումները կատարվում են սեփականատերերի ուժերով, չնայած որ՝ նախկին ագրոսերվիսները՝ «Ախուրյանի», «Մասիսի», «Սիսիանի», «Կապանի», նույնպես իրականացնում են ընթացիկ նորոգումներ:

Մեխանիզատորները, ցանկության դեպքում, կարող են դիմել նրանց ծառայություններին: Իսկ պահեստամասերը ձեռք են բերվում հանրապետությունում գործող առևտրի կետերից՝ Նուռնուսի կենտրոնական բազայից, Մասիսի ագրոսերվիսից, Մալաթիայիում գործող գյուղտեխնիկայի պահեստամասերի վաճառքի կետերից:

ՀՀ կառավարության 16.05.2013 թ. N 507-Ա որոշմամբ, «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի, «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի» միջոցով, գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններին և մարզերի արոտ օգտագործողների միավորումներին է տրամադրվել 138 միավոր գյուղտեխնիկա, որից՝ 19 միավոր «ՄՏԶ 82.1» մակնիշի տրակտոր: Ինչպես նաև ընթացքի մեջ է նույն ԾԻԳ-ի միջոցով ձեռք բերված 35 միավոր «ՄՏԶ 82.1» մակնիշի տրակտորների և 154 միավոր տարբեր մակնիշների գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրումը համայնքներում ստեղծված արոտ օգտագործողների միավորումներին:

Գյուղտեխնիկայի պետական տեսչության պետը կարևորեց այն փաստը, որ գյուղատնտեսության նախարարության կողմից աշխատանքներ են տարվում հանրապետությունում, մինչև գարնան գյուղատնտեսական աշխատանքների սկսվելը, հացահատիկահավաք կոմբայնների, ինչպես նաև 80 ձ. ուժ և փոքր հզորությամբ տրակտորների ապահովվածության և պահանջարկի ուսումնասիրության ու ներկրման ուղղությամբ:



ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղտեխնիկայի պետական տեսչությունը հիշեցնում է, որ գյուղատնտեսական տեխնիկան հաշվառելու նպատակով և հաշվառումից հանելու դեպքում, սեփականատերն, ըստ կարգի, ներկայացնելու է հետևյալ փաստաթղթերը.

Գյուղատնտեսական տեխնիկան հաշվառելու նպատակով՝ սեփականատերը կամ նրա կողմից լիազորված անձը ներկայացնում է սահմանված ձևի դիմում, գյուղտեխնիկայի սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթ: Ինքնաշեն գյուղտեխնիկայի հաշվառման դեպքում ներկայացվում են հիմնական հանգույցների (շարժիչի, ամրաշրջանակի) ձեռքբերման օրինականությունը հաստատող փաստաթղթեր, օրենքով նախատեսված պետական տուրքի վճարման անդորրագիր (900005161824 հաշվի համարին՝ 5000 դրամ): Ֆիզիկական անձը ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ, իսկ իրավաբանական անձը՝ պետական գրանցման վկայական: Գործառույթն իրականացվում է երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Իսկ հաշվառումից հանելու դեպքում՝ ներկայացվելու է սահմանված ձևի դիմում, սահմանված պետական տուրքի անդորրագիր (900005161527 հաշվի համարին՝ 500 դրամ), տեխնիկական վկայագիր և պետական համարանիշ, ֆիզիկական անձը՝ անձը հաստատող փաստաթուղթ, իսկ իրավաբանական անձը՝ պետական գրանցման վկայական: Այս դեպքում գործառույթն իրականացվում է տեղում՝ անմիջապես:

Իսկ կորցրած տեխնիկական վկայագրի կամ պետական համարանիշի դիմաց նորը (կրկնօրինակը) տրամադրելու դեպքում՝ անհրաժեշտ է ներկայացնել սահմանված ձևի դիմում, տեխնիկական վկայագրի կամ պետական համարանիշի կորստի վերաբերյալ հազար և ավելի տպաքանակ ունեցող մամուլում տրված հայտարարություն (թերթի օրինակը), սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիր (900005161824 հաշվի համարին՝ 10000 դրամ), Ֆիզիկական անձը՝ անձը հաստատող փաստաթուղթ, իսկ իրավաբանական անձը՝ պետական գրանցման վկայական: Գյուղտեխնիկայի վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի, տեխնիկական տվյալների համապատասխանությունը ստուգելուց հետո գործառույթն իրականացվում է երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Իսկ տրակտորիստ-մեքենավարների վարման իրավունքի վկայականների տրամադրումը կատարվում է հետևյալ կարգով. դիմող անձը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝ սահմանված ձևի դիմում, անձնագրի պատճեն, տրակտորիստ-մեքենավարների դասընթացն ավարտելու մասին տրված ավարտական փաստաթղթի պատճեն, երկու լուսանկար՝ 3x4 սմ չափսի (գունավոր), պետական տուրքի վճարման անդորրագիր (900005165619 և 900005163291 հաշվի համարներին՝ 3000-ական դրամ), տրակտորիստ-մեքենավարի վկայականի պատճեն՝ վարման իրավունքի կարգը փոխելու դեպքում: Որակավորման քննությունն անցկացվում է դիմումը ներկայացնելու օրվանից ոչ ուշ, քան՝ տասնհինգ օր և ոչ շուտ, քան՝ տասը օր հետո: Որակավորման քննության ավարտից հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում, հանձնաժողովի՝ որակավորման քննության մասին դրական եզրակացության հիման վրա, տեսչությունը տվյալ անձին տրամադրում է տրակտորիստ-մեքենավարի վարման իրավունքի վկայական:

Տրակտորիստ-մեքենավարների վարման իրավունքի վկայականների կրկնօրինակի տրամադրման դեպքում անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը. դիմող անձը պետք է ներկայացնի սահմանված ձևի դիմում, անձնագրի պատճեն, երկու լուսանկար՝ 3x4 սմ չափսի (գունավոր), պետական տուրքի վճարման անդորրագիր (900005165619 հաշվի համարին՝ 6000 դրամ): ՀՀ իրավասու մարմինների (այդ թվում՝ այլ պետություններում տրված), ինչպես նաև նախկին ԽՍՀՄ հանրապետությունների իրավասու մարմինների կողմից տրված տրակտորիստ-մեքենավարի վկայականը կորցնելու, ինչպես նաև փոխանակելու դեպքում՝ այն տնօրինողին, սահմանված կարգով, նույն խմբի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի նոր վկայական է հատկացվում՝ առանց որակավորման քննություն հանձնելու, երեք աշխատանքային օրվա ընթացքում, իհարկե, դիմումի, տրակտորիստ-մեքենավարի վարման իրավունքի վկայականի, երկու լուսանկարի 3x4 չափսի (գունավոր) և պետական տուրքի վճարման անդորրագրի (900005165619 հաշվի համարին՝ 3000 դրամ) առկայության դեպքում:

**Լիանա Շախնազարյան**

## ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

# ԳԵՏՆԱՆՈՒՇԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Գետնանուշի հայրենիքը Բրազիլիան է: Ներկայումս գետնանուշը մշակվում է հարավային Ասիայում՝ Հնդկաստանում, Չինաստանում, ինչպես նաև՝ Իսպանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և Բալկանյան երկրներում:**

**Աշխարհում գետնանուշի ցանքատարածությունները կազմում են 18 հեկտար, որից՝ 5.3 մլն՝ ասիական երկրներում:**

**ՀՀ-ում վաղուց ի վեր մշակվում է գետնանուշի Մեղրիի տեղական սորտը, իսկ այժմ՝ նաև նոր սորտեր:**

**Գետնանուշը ջերմասեր և խոնավասեր միամյա մշակաբույս է: Գետնանուշի սերմը պարունակում է 40-60 % բարձրորակ յուղ, 30-31 % սպիտակուցներ և 9-10 % ածխաջրատներ: Գետնանուշի սերմերից ստացված յուղը սննդարար է և համային հատկանիշներով գերազանցում է սոյայի, արևածաղկի, եգիպտացորենի և, նույնիսկ, ձիթապտղի յուղերին: Այն օգտագործվում է պահածոների, մարգարինի, օճառի, հրուշակեղենի և սննդի արդյունաբերության մեջ: Սերմերից ստացված քուսպը պարունակում է մինչև 48% սպիտակուցներ և 8% յուղ: Հաճախ գետնանուշի քուսպը՝ խառնուրդի ձևով, օգտագործում են շոկոլադ, կակաո և սուրճ պատրաստելու համար: Սերմերը բոված վիճակում ունեն հաճելի համ և ուտելի են: Վերգետնյա մասը հանդիսանում է կոպիտ անասնակեր, իսկ աղացած պտղաթաղանթը լավ թռչնակեր է:**

**Երկրագործության գիտական կենտրոնի սերմնաբուծության բաժնի գիտնականների կողմից կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ Արարատյան դաշտավայրի և նրա նախալեռնային գոտու ցածրադիր տարածքների հողակլիմայական պայմանները՝ գետնանուշի աճի և բարձր բերքատվություն ապահովելու համար, միանգամայն նպաստավոր են: 1999-2009թթ. փորձարկվել են համաշխարհային հավաքածուից ներմուծված 28 վաղահաս սորտանմուշներ: Արդյունքում, Արարատյան դաշտավայրի պայմանների համար ընտրվել են առավել վաղահաս և բարձր բերքատու 2 սորտեր՝ Մումթազ և Սոլոմաթ, որոնք կարելի է համեմատել հանրապետությունում մշակվող միակ Մեղրիի տեղական սորտի հետ:**

**Բավարար ագրոտեխնիկական միջոցառումներ կիրառելիս, հեկտարից կարելի է ստանալ 24-26 ց/հա բերք: Գետնանուշի մշակությունը ոչ միայն շահութաբեր է, այլև, ինչպես թիթեռնածաղկավոր ընտանիքի բոլոր մշակաբույսերը, դրանք հողը հարստացնում են ազոտային միացություններով:**

**Գետնանուշի համար լավագույն նախորդներ են՝ աշնանացան ցորենը, ոչ բակլազգի բանջարանոցային և շարահերկ մշակաբույսերը:**

**Ցանքի համար նախատեսված սերմերը պարտադիր պետք է պահել պատիճներով, քանի որ պատիճներից անջատված սերմերն արագ կորցնում են ծլունակությունը: Ուսի պտղաթաղանթից սերմերը պետք է անջատել միայն ցանքից 5-10 օր առաջ և, որպես սերմացու, օգտագործել միայն առողջ, խոշոր և չջարդված սերմերը: Ցանքից առաջ խորհուրդ է տրվում սերմերը մշակել ազոտաբակտերիաների համապատասխան շտամով: Բարենպաստ եղանակային պայմաններում ցանքը կարելի է սկսել ապրիլի երկրորդ տասնօրյակից, իսկ անձրևային և համեմատաբար ցուրտ եղանակային պայմանների դեպքում՝ մինչև մայիսի առաջին տասնօրյակը: Մեքենայացված եղանակով ցանքը պետք է կատարել եգիպտացորենի շարքացանով՝ 70x10x1 սխեմայով: Ցանքի նորման 70-90 կգ/հա է: Փոքր տարածությունների վրա ցանքը կարելի է կատարել ձեռքով՝ 6-8 սմ խորությամբ: Սերմերի ծլունակությունն ապահովելու համար ցանքից անմիջապես հետո անհրաժեշտ է դաշտը ջրել: Առաջին ծիլերն ի հայտ են գալիս ցանքից 8-12 օր հետո: Ցանքատարածությունը լիարժեք օգտագործելու նպատակով, անհրաժեշտ է չծլած բնիկներում ցանքը կրկնել: Առաջին քաղհանը և**



**կուլտիվացիան պետք է կատարել 5-6 տերևի ձևավորման փուլում, ընդ որում՝ վեգետացիայի ընթացքում անհրաժեշտ է կատարել 3-4 քաղհան-բուկլից և 5-6 կուլտիվացիա:**

**Չափազանց կարևոր է բուկլիցի կատարումը, քանի որ գենոֆորները, այդ ագրոմիջոցառման շնորհիվ, ծածկվում են հողով, ինչը նպաստում է ապագա բերքի ձևավորմանը:**

**Եթե աշնանը հողը հարստացվել է ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերով, ապա վեգետացիայի ընթացքում անհրաժեշտ է բույսերը 2 անգամ սնուցել միայն ազոտական պարարտանյութերով՝ N 60-90 կգ/հա (ազդող նյութի հաշվով) չափաբաժնով: Եթե նախօրոք հող չեն մտցվել ֆոսֆորական և կալիումական պարարտանյութեր, ապա խորհուրդ է տրվում, ազոտականի հետ մեկտեղ, բույսերը սնուցել այդ պարարտանյութերով՝ 30 կգ/հա չափաբաժնով: Առաջին սնուցումը պետք է կատարել բույսերի զանգվածային ծաղկման շրջանում, իսկ երկրորդը՝ դրանից մեկ ամիս անց: Գետնանուշը խոնավասեր բույս է, և բարձր բերք ստանալու համար խիստ կարևոր է ոռոգման ճիշտ ժամկետների ընտրությունն ու ժամանակին կատարումը: Վեգետացիայի սկզբում և վերջում գետնանուշի բույսերը ջուր քիչ են պահանջում, իսկ զանգվածային ծաղկման և պտղակալման փուլերում՝առավել շատ: Այնուհանդերձ, ջրելիս խորհուրդ է տրվում առաջնորդվել բույսերի տերևների գունավորման ինտենսիվությամբ: Ընդ որում, տերևների մուգ կանաչ գույնը վկայում է ջրելու անհրաժեշտության մասին:**

**Կարևոր է նաև ջրի չափաբաժնի պահպանումը, անհրաժեշտ է ջրել մինչև թմբերի կեսի հագենալը: Թմբերի լրիվ հագեցումը ջրով բացասաբար է անդրադառնում բույսերի կենսագործունեության վրա և կարող է պտուղների նեխման պատճառ դառնալ:**

**Վեգետացիայի ընթացքում գետնանուշը ջրվում է 5-6 անգամ, ընդ որում՝ վերջին ջրումը պետք է կատարել սեպտեմբերի կեսերին՝ սերմերի տեխնիկական հասունացման սկզբնական փուլում:**

**Գետնանուշի բերքահավաքը կատարվում է այն ժամանակ, երբ պտղաթաղանթի ներսի գույնը դառնում է բաց շագանակագույն: Դա կախված է ցանքի ժամկետից, տարվա եղանակային պայմաններից (կարող է լինել հոկտեմբերի առաջին կամ երկրորդ տասնօրյակում): Մեծ տարածություններում բերքահավաքը կարելի է կատարել կարտոֆիլահան մեքենայով: Խորհուրդ է տրվում հավաքված բույսերը 8-10 օր պահել լավ օդափոխվող սենյակում՝ մինչև լրիվ կչորանա: Չորանալուց հետո անհրաժեշտ է առանձնացնել հաջորդ տարվա ցանքի սերմացուն՝ ընտրելով լրիվ հասունացած և առողջ ունդերը:**

**Լ. Մաթևոսյան,**
**Ռ. Ղազարյան**
***Երկրագործության գիտական կենտրոն***

## ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳ

# ԱԳՐՈՔԻՄԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

**Անցել են ժամանակները, երբ ամեն ինչ շատ պարզ էր. տալիս ես այսքան պարարտանյութ, ստանում ես այսքանով բարձր բերք, վարում ես հողն այս խորությամբ՝ ապահովում ես ևս մի գործոն: Այժմ շատերն են հասկանում, որ գյուղատնտեսությունը բավականին բարդ բնագավառ է, և նրանում հաջողության հասնելու համար շատ և շատ գիտելիքներ ու հմտություններ են հարկավոր. միշտ չէ, որ հետագայում տրամաբանական համարվող որոշումը սկզբում էլ է այդպես ընկալվել: Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում որոշ շրջաններ թողնում են առանց ոռոգման ցանցի և բավարարվում ստացված «կես-բերքով»: Ի դեպ, Վրաստանն ընդամենը մի քանի տարի է, ինչ ոռոգման համակարգ է ստեղծում. ծախսել է մոտ 50 միլիոն դոլար և մոտ 45 հազար հեկտար հողատարածք դարձրել ոռոգելի:**

Խոսքը միայն ոռոգման մասին չէ, այլ՝ ոչ ստանդարտ, յուրատեսակ, բայց և կշռադատված մոտեցումների: Բարձր (ավելի ճիշտ՝ օպտիմալ) բերք ստանալու համար՝ վառելանյութի, պարարտանյութերի, միջոցների բացակայության պայմաններում, միևնույն է, անհրաժեշտ է առաջին հերթին կատարել հողահանդակների համալիր հետազոտություն, որը կտա տեղեկատվություն՝ հողին անհրաժեշտ սննդատարրերի, դրանց տրման ձևերի, չափաբաժինների և տրման ժամկետների վերաբերյալ: Վերջինս հատկապես կարելի է կատարել այն տնտեսություններում, որտեղ պարարտացման ծախսերը բարձր են կամ գերակշռող: Դրան պետք է հետևեն խոնավության ապահովման և հողի մեխանիկական կառուցվածքի տվյալները: Եթե հողը վատն է, պետք է քիչ ծախս անել՝ արդյունքում քիչ բերք կստացվի, ինքնարժեքն էլ ցածր կլինի: Փոխարենը՝ լավ հողի վրա պետք է ծախսել ու ավելի բարձր բերք ստանալ. այս դեպքում էլ ինքնարժեքը ցածր կլինի՝ արդեն բարձր բերքատվության հաշվին:



ՌԴ գյուղատնտեսության նախարարությունը, դեռևս 2003 թ. սեպտեմբերին, հաստատել է «Գյուղատնտեսական հողերի համալիր մոնիթորինգի վերաբերյալ մեթոդական ցուցումներ», համաձայն որի՝ տնտեսությունները 5 տարին մեկ պետք է ապահովեն իրենց հողերի ագրոքիմիական հետազոտություն: ՌԴ «Ռոսսելխոզնադզոր» հզոր կառույցը ստեղծել է մի քանի մարզ սպասարկող ռեֆերենտ կենտրոններ (ՌԿ), որոնք, կահավորված լինելով ամենաարդիական սարքավորումներով և համալրված լինելով բարձր որակավորում ունեցող մասնագետներով, շատ մատչելի գներով ապահովում են ճշգրիտ տվյալների ստացում և դրանց գրագետ վերլուծություն, որոնք ամփոփվում են հողագործին տրվող պարզ ցուցումներով:

Նմուշառումը կատարվում է GLONASS/GPS տեխնոլոգիաներով և բարձրորակ տիեզերանկարահանումներով, որոնց մշակումից հետո ֆերմերն ունենում է իր հողերի քարտեզագրումը, դաշտերի անձնագրերը և յուրաքանչյուր դաշտի համար պարարտացման սխեմաները, որոնք թույլ են տալիս ընտրել ծախսերի և բերքի ամենահարմար տարբերակները:

Ռոստովի մարզում գտնվող Ռեֆերենտ կենտրոնի Վոլգոգրադյան մասնաճյուղը տարվա սկզբից սպասարկել է մոտ 70 հազար հեկտար հողատեսքեր՝ հետազոտելով 1900 հողանմուշ, որոնցում որոշվել են N, P, K պարունակությունը, հումուսը, միկրոտարրերը, հողի թթվայնությունն ու մեխանիկական կազմը: Ագրոքիմիական հետազոտություններին զուգահեռ, կարելի է պատվիրել համակարգված ֆիտոսանիտարական հետազոտություններ՝ փաստաթղթերի լիարժեք փաթեթի տրամադրումով: Նման համակարգի առկայությունը մեր հանրապետությունում, համապատասխան ֆինանսավորման պարագայում, նպաստավոր կլիներ հայ հողագործի համար, միաժամանակ կաշխուժացվեր խորհրդատվական համակարգը:

Վ Հ

## ՄԵԶ ՀԵՏ ՉԷ ՄԵԾ ՄԱՐԴԸ...



Մահկանացուն կնքեց գյուղատնտեսության ոլորտի ակնառու գործիչ Հենրիկ Վարդանի Թարջումանյանը, մարդ, ով շուրջ կես դար իր կյանքը կապել է գյուղատնտեսության հետ՝ մեծ ներդրում ունենալով վերջինիս զարգացման գործում:

Նա ծնվել է 1927 թվականին: 1951թ. ավարտել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտը: 1951-1959 թթ. աշխատել է Հայաստանի տարբեր մեքենատրակտորային կայաններում: 1961-1962 թթ. եղել է ՀԿԿ Բասարգեչարի շրջկոմի առաջին քարտուղար: 1963-1964թթ. աշխատել է Մարտունու շրջանի գյուղատնտեսական արտադրության վարչության պետ:

1965-1967 թթ. եղել է «Հայգյուղտեխնիկա» միավորման նախագահ: 1967-1969 թթ.՝ ՀԿԿ Կիրովականի քաղկոմի առաջին քարտուղար:1969-1975 թթ. վարել է Հայաստանի արհեստակցական միությունների խորհրդի նախագահի պաշտոնը: 1975 -1985 թթ. եղել է ՀԽՍՀ գյուղատնտեսության նախարար:

1958-1990 թթ. աշխատել է շրջակա միջավայրի, ապա՝ բնության պահպանության պետկոմի նախագահ, 1990-1992 թթ.՝ «Հայթռչնարդ» հանրապետական արտադրական միավորումում՝ որպես գլխավոր տնօրեն:

Ինչ պաշտոն էլ վարել է Հենրիկ Թարջումանյանը, աչքի է ընկել սկզբունքայնությամբ, բանիմացությամբ և գործին անմնացորդ նվիրումով: Պաշտպանել է գիտական թեզ և արժանացել գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի կոչման: Ընտրվել է Հայաստանի և Սովետական Միության Գերագույն խորհուրդների պատգամավոր: Արժանացել է կառավարական բազում պարգևների:

Նրա հիշատակը անջնջելի կմնա նրանց հիշողության մեջ, ովքեր երբևէ ճանաչել, աշխատել ու շփվել են այդ հիանալի մարդու հետ:

Խորին խոնարհում՝ սեր ու հարգանք վայելող մարդու վաստակի ու անկրկնելի էության առջև:

*ՀՀ գյուղատնտեսության նախարարություն*

**Սեմինար**

## ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄԻ (ԱՌՆԱՊ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

***Օրերս Տավուշի մարզպետարանում կազմակերպվել էր սեմինար-քննարկում՝ «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմի (ԱՌՆԱՊ) գործունեությունը Հայաստանում» թեմայով:***

Ներկա էին՝ ԱՌՆԱՊ հիմնադրամի տնօրենի տեղակալ Արա Բարսեղյանը, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի համակարգողներ և փորձագետներ, ԱԻՆ «Հիդրոմետ» ծառայության օդերևութաբանության կենտրոնի պետ Զարուհի Պետրոսյանը, մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ, Իջևանի հոգևոր հովիվ Տեր Սիմեոն քահանա Առաքելյանը, ԳԱՄԿ-ի տնօրեն Վահան Կարապետյանը, Հայկական Կարմիր Խաչի Տավուշի մասնաճյուղի տնօրեն Վաչիկ Սարիբեկյանը, ՀՀ Տավուշի մարզային փրկարարական վարչության պետ Վաղինակ Հովսեփյանն ու ոլորտում ներգրավված այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, անհատ փորձագետներ: Քննարկվող թեման ներկայացրել է ԱՌՆԱՊ-ի տնօրենի տեղակալ Արա Բարսեղյանը: Թեմայի շուրջ ելույթով հանդես է եկել ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի համակարգող Դիանա Հարությունյանը: «Տեղական զարգացման բարելավված պլանավորման միջոցով կլիմայի փոփոխության ռիսկերի մեղմումը գյուղական համայնքներում» ՄԱԶԾ ծրագրով նախատեսվել է իրականացնել գործունեություն Հայաստանի մարզերում: Նախնական ուսումնասիրության համար ընտրվել են Տավուշի և Վայոց ձորի մարզերը: Ծրագրի փորձագետը ներկայացրել է նախատեսվող միջոցառումների համալիրը, ազդակիր խնդիրները և կից օգուտները:

Քննարկվել են նաև սկզբունքները, որոնցով պետք է ընտրվի մարզի 22 համայնք՝ ծրագիրն իրականացնելու համար: Կատարվել է նախնական ընտրություն՝ քննարկելով համայնքի կլիմայական գոտին, լանդշաֆտը, համայնքի ռիսկերին ենթարկվածության աստիճանն ու գյուղատնտեսության ուղղվածությունն՝ առավելությունը տալով բուսաբուծության զարգացմանը: ԱԻՆ «Հիդրոմետ» ծառայության օդերևութաբանության կենտրոնի պետ Զարուհի Պետրոսյանը ներկայացրել է մարզային կառույցների հետ համագործակցությունն ու առկա խնդիրները: Ըստ նրա՝ մարզում առկա 3 հիդրոմետ կայաններին պետք է ավելանա ևս մեկ ավտոմատ օդերևութաբանական կայան: Այն լինելու է 10 քառակուսի մետր մակերեսով տնակ: Ավտոմատ կայանի տեղադրման վայրի համար պետք է կատարվի ուսումնասիրություն՝ ապահովելով կայանի պահպանությունը, անվտանգությունն ու էլեկտրականությանը միացնելու հնարավորությունը: Ավտոմատ կայանը կընկալի առավել մեծ տարածքի եղանակի փոփոխությունը, և եթե այն տեղադրվի ֆերմերային տնտեսության տարածքում, ապա հիդրոմետ ծառայությունների աշխատանքն ավելի օպերատիվ կդառնա և կնվազեցնի գյուղատնտեսության վարման գործընթացում կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած ռիսկերը:

### ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**Պահպանել անտառներում և անտառամերձ տարածքներում հակահրդեհային կանոնները**

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը տեղեկացնում է, որ վերջին օրերին անտառային տարածքներում բռնկված հրդեհների պատճառ են հանդիսանում քաղաքացիների կողմից խոտհարքների, արոտավայրերի և ցանքատարածքների չոր խոտածածկույթի նպատակային հրկիզումները:

Չնայած հրդեհների մարման ուղղությամբ անտառապահխմբի և փրկարար ծառայությունների աշխատակիցների ներդրած ջանքերին, երբեմն անհնար է լինում կանխել հրդեհների տարածումը դեպի անտառային տարածքներ և արդյունքում՝ անտառը կրում է մեծ վնասներ:

Անհրաժեշտ ենք համարում նաև տեղեկացնել, որ ՀՀ օրենսդրությունը խիստ պատասխանատվություն է սահմանել նման բնապահպանական օրինախախտումների համար, իսկ անտառին հասցված վնասի փոխհատուցման ուղղությամբ օրենքով նախատեսված են բարձր տուգանքներ:

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ դիմում ենք անտառամերձ համայնքների բնակչությանը՝ խստագույնս պահպանել անտառներում և անտառամերձ տարածքներում հակահրդեհային կանոնները և զերծ մնալ չոր խոտածածկույթների հրկիզման հակաօրինական գործողություններից:

Անտառային հրդեհների յուրաքանչյուր դեպքի մեղավորների բացահայտմանը հետամուտ են լինելու պատկան մարմինները և բոլոր մեղավորները պատասխանատվություն են կրելու օրենքի ողջ խստությամբ:

**Համայնքային**

## *ԿԱՆԱՆՑ ԴԵՐԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ*

**«Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունն Աշտարակ քաղաքում կազմակերպել է համաժողով՝ «Կանանց դերը գյուղական համայնքներում» ծրագրի շրջանակներում: Մասնակցում էին Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերի մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, կանանց հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:**

**Ծրագիրը նպատակ ուներ բարձրացնել կանանց դերը գյուղական համայնքներում, ներգրավել նրանց հասարակական կյանքի կարևոր գործընթացներում, օգնել մասնակցելու որոշումների կայացման և դրանց լուծման հարցում:**

**«Կոալիցիաների և համացանցի դերը կանանց հզորացման գործում» թեմայով զեկուցումով հանդես եկավ կենտրոնի նախագահ Սվետլանա Ասլանյանը: Նա նշեց, որ ծրագրի հաջողության գրավականներից մեկը՝ կանանց հասարակական կազմակերպությունների ցանցի ստեղծումն է, որի հետևողական գործունեությունը կոչված է նպաստելու ուժեղ գյուղական համայնք ստեղծելուն:**

**Գյուղական համայնքների հիմնախնդիրներին անդրադարձավ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Գայանե Դանիելյանը: Նա ներկայացրեց երեխաների, կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ-ում և մարզում առկա հիմնախնդիրները, կարևորեց այդ գործում պետական, հասարակական կառույցների համագործակցությունը, կրթության, առողջապահության, սոցիալական ոլորտի աշխատողների համագործակցված աշխատանքը: Նշեց, նաև, որ մարզի 3 քաղաքային համայնքապետարաններ ստեղծել են գենդերային հիմնախնդիրներով զբաղվող հանձնաժողովներ:**

**Մյուս ելույթ ունեցողները կարևորեցին ակտիվ կանանց միավորման գաղափարը, որը կնպաստի քաղաքացիական հասարակության ուժեղացմանը:**

**Ծանոթություն**

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**Օրերս Գեղարքունիքի մարզ էին այցելել ֆինանսական հաշտարարի գրասենյակի աշխատակիցները՝բնակչության հետ հանդիպելու նպատակով: Առաջին հանդիպումը կայացավ Գեղարքունիքի ԳԱՄԿ-ում՝ մարզի գյուղատնտեսության խորհրդատուների հետ: Այցելության հիմք էր հանդիսացել այն հանգամանքը, որ՝ կատարված հարցումների արդյունքում, մարզի բնակչության միայն 36 տոկոսն է տեղյակ եղել հաշտարարի գրասենյակի և նրա գործունեության մասին: Խնդիր դրվեց մեծացնել գրասենյակի ճանաչողական աշխարհագրությունն ու միաժամանակ ներկայացնել վերջինիս գործունեության նպատակներն ու խնդիրները:**

**Ֆինանսական հաշտարարի գրասենյակը 5 տարեկան է, և այդ տարիների գործունեության հաշվետվությունը ներկայացվեց ներկաներին: Գրասենյակի աշխատակիցները նաև պարզաբանումներ ներկայացրեցին բանկերի և ապահովագրական ընկերությունների հետ ֆիզիկական անձանց հարաբերությունների իրավական և ռիսկային հատվածների վերաբերյալ և նշեցին, թե որ դեպքում քաղաքացին կարող է դիմել հաշտարարին: Նշվեց նաև, որ անցած տարիների ընթացքում ստացված բողոքների 68 տոկոսում բարձրացված հարցերը լուծվել են ի օգուտ հաճախորդի:**

**Նմանատիպ հարցեր են քննարկվել նաև Սարուխան համայնքում:**

***Գեղարքունիքի ԳԱՄԿ***

## Գարունը կանանց համար

# Աշխատանքի ստեղծագործաբար մոտեցում

***Արմենուհի Աղաբաբյանը, ով ապրում և հողագործությամբ է զբաղվում Ախթալայում (Լոռու մարզ), Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի ծրագրերից մեկի՝ «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի ակտիվ շահառուներից է:***

Արմենուհի Աղաբաբյանը Շամլուղում և Փոքր Այրումում գտնվող իր հողակտորներում աճեցնում է պտղատու ծառեր՝ խնձորենի, տանձենի, սալորենի, ընկուզենի, թթենի և այլն, ինչպես նաև բանջարեղենի ու հատապտուղների տարբեր տեսակներ: Հողագործության հանդեպ նրա սերն ու հետաքրքրությունն առաջացել են դեռևս մանկության տարիներին:



Արմենուհի Աղաբաբյանն առանձնահատուկ հաճույքով է խոսում իր սիրելի զբաղմունքներից մեկի՝ մեղվապահության մասին: Սկզբնական շրջանում քիչ մեղվաընտանիքներ է ունեցել, սակայն շատ կարճ ժամանակահատվածում դրանց թիվն ավելացել է՝ հասնելով 10-ի: «Մեղուները մշտական ուշադրություն ու խնամք են պահանջում: Բազմաթիվ նրբություններ կան, որոնց հարկավոր է տիրապետել՝ մեղվաընտանիքները պահպանելու և ավելացնելու, որակյալ մեղր ստանալու համար: Համացանցից նյութեր եմ կարդում, խորհուրդներ եմ հարցնում այդ ոլորտում փորձառու մարդկանցից, փոխել եմ փեթակների շրջանակները նորերով... Շատ անելիքներ կան, բայց մեծ հաճույքով եմ անում այդ գործը»,- ասում է Արմենուհին:

Երեք զավակների մայր լինելով, հպարտությամբ է նշում, որ իր որդին այժմ ՀՀ զինված ուժերում հայրենիքի հանդեպ իր պարտքն է կատարում: Արմենուհի Աղաբաբյանը մասնագիտությամբ մանկավարժ է, ռուսաց լեզու է դասավանդում Ախթալայի թիվ 1 դպրոցում:

«21 տարեկանից սկսել եմ աշխատել իմ հարազատ դպրոցում: Օրվա մեծ մասն այնտեղ եմ անցկացնում՝ գործընկերներիս ու իմ սիրելի աշակերտների հետ: Երբեմն ընտանիքիս, իմ սիրելի զբաղմունքների համար շատ քիչ ժամանակ է մնում: Սակայն, ինչպես և յուրաքանչյուր հայ կին, այնպես էլ ես, փորձում եմ ամեն ինչ հասցնել, համատեղել և ստանալ իմ գործունեության լավագույն արդյունքը: Հարկավոր է յուրաքանչյուր աշխատանքի ստեղծագործաբար մոտենալ, սեր ու հոգի ներդնել, այնպես անել, որ դրանից օգուտ քաղեն ու շահեն նաև ուրիշները»,- նշում է նա: Իր այգիների բերք ու բարիքից պահածոներ, անուշահամ չրեր, թթու լավաշ ու շարոց է պատրաստում: Պատմում է, որ վերջին անգամ յուրահատուկ ձևով է պատրաստել շարոցի շփոթը. օգտագործել է տանձ ու խնձոր, որոնք հետաքրքիր համ ու բուրմունք են հաղորդել շարոցին:

Ազատ ժամանակ զբաղվում է նաև ձեռագործով՝ ասեղնագործությամբ, հելունագործությամբ: «Այնպիսի բաներ եմ գործում, որոնք շատ են օգտագործվում կենցաղում: Տոնական օրերին դրանք գեղեցիկ փաթեթավորում եմ և նվիրում հարևաններին, հարազատներիս, ընկերուհիներիս: Ուշադրության նման փոքրիկ դրսևորումներով փորձում եմ հաճելի անակնկալներ մատուցել և ուրախացնել իմ սիրելի մարդկանց»,- ասում է Արմենուհի Աղաբաբյանը:

Այսպիսին է մեր հերոսուհին՝ չնայած իր բազմազբաղ ու հագեցած առօրյային՝ միշտ փնտրտուքի մեջ. փորձում է ընդլայնել իր տնտեսությունը, կյանքի կոչել իր բազմաթիվ գաղափարներն ու նպատակները՝ ոչ միայն իր ընտանիքի, այլև՝ հարազատ համայնքի բարօրության ու զարգացման համար:

*Անուշ Շիլաջյան,*
*ՀԵԿԱ*

# Արժանապատիվ ճանապարհ

***Էլմիրա Նահատակյանը ծնվել է Երևանում, ավարտել Կռիլովի անվան միջնակարգ դպրոցը: Կրթությունը շարունակել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում՝ այգեպտղաբանջարաբուծական ֆակուլտետում, ստացել գյուղատնտեսի որակավորում: 1976թ.-ից բնակվում է Կոտայքի մարզի Նաիրիի տարածաշրջանի Նոր Արտամետ համայնքում: Աշխատել է Նոր Արտամետ համայնքի Գիտությունների Ակադեմիայի կենտրոնական բազայում, սկզբում՝ լաբորանտ, իսկ 1978թ.-ից՝ որպես գյուղատնտես: 2007թ.-ից մինչ օրս աշխատում է Կոտայքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնում՝ որպես Նաիրիի տարածաշրջանի գյուղատնտեսության խորհրդատու:***

Երեք երեխաներին մեծացնելու և դաստիարակելու ծանր ու հաճելի պարտականությունն ուսերին՝ համատեղում էր աշխատանքն ու ընտանիքը: Ընդամենը 1000 քմ հողատարածքում իր աճեցրած տնկիներով հիմնում է փոքր պտղատու այգի:

Էլմիրա Նահատակյանն աշխատում է 25 տարեկանից, և քանի որ Նոր Արտամետ համայնքում տնտեսության գերակա ճյուղ էր համարվում այգեգործությունը, շատերի պես աշխատել և հաջողությունների է հասել հենց այս ասպարեզում: Լինելով իր գործի հմուտ վարպետ՝ միշտ կարևորում է այգու խնամքի աշխատանքները, որի արդյունքում ոչ միայն կարողանում է ստանալ որակյալ և բարձր բերք, այլև բեղմնավոր խորհրդատվական աշխատանք է իրականացնում այդ ուղղությամբ: Տարիների քրտնաջան աշխատանքի արդյունքում՝ Էլմիրա Նահատակյանն ունի խնձորի հսկայական այգի, որտեղ թոռնիկների հետ անցկացնում է իր ամբողջ ազատ ժամանակը:

Կարելի է վստահորեն ասել, որ տարիներ անց տիկին Էլմիրայի բոլոր նպատակներն իրականություն են դարձել, և հայ կնոջ ակտիվությունը գյուղատնտեսության մեջ Հայաստանում էլ ավելի է գնահատված:

Ըստ տիկին Էլմիրայի՝ աշխատասեր, իր անձը մոռացող, ընտանիքին նվիրված է հայ կինը: Գործունյա հայուհին ճշմարտապես կարող է համարվել հայ ազգի գլխավոր հենարանը: Լուռ աշխատասիրությունը հայուհու կյանքի անբաժան հատկանիշն է, գլխավոր առաքինություններից մեկը:

Կոտայքի ԳԱՄԿ

# Կարևորելով եկամուտների ավելացումը

**Տավուշի մարզի մի փոքր անկյունում է գտնվում Իջևանի տարածաշրջանի Լուսաձոր համայնքը: Այն մարզի ամենալուսավոր ու նորագույն տեխնոլոգիաներով հագեցած գյուղերից է: Տարածաշրջանում կաթիլային ոռոգման համակարգով ջերմատնային տնտեսություններ՝ ամենաշատ շուրջ 25-ը, այստեղ են գտնվում: Գործում է նաև կոոպերատիվ, որը ներառում է չրի պատրաստման, հացաթխման արտադրամասեր, մթերային խանութ, սառնարանային տնտեսություն: Լեյլա Այվազյանն այդ կոոպերատիվի անդամ է: Աշխատում է գյուղապետարանում՝ որպես գլխավոր հաշվապահ:**

- Ես ինձ կարևորված ու գնահատված եմ զգում մեր համայնքում: Աչք եմ բացել՝ շուրջս այգիներ, հրաշք բնություն, էկոլոգիապես մաքուր սննդամթերք, բայց արդյունքը միշտ չէ որ գոհացուցիչ է եղել: Ապրել եմ սովորականի պես, աշխատել մի «փոր հացի» համար: Հիմա ամեն ինչ այլ է:

Համայնքի հին՝ անեկամտաբեր այգիները փոխարինվել են երիտասարդ այգիներով: ՄԱՁԾ-ի (Նախնական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ծրագիր) կողմից գյուղացիական տնտեսություններին է բաշխվել արքայանարնջի շուրջ 11 հազ. տնկի: Այդ առումով անհրաժեշտություն է դարձել գյուղմթերքների վերամշակման կետի ստեղծումը: Նպատակը՝ գյուղմթերքների ապրանքային տեսքի և իրացման միջոցով, տնային տնտեսությունների եկամուտների ավելացումն էր: Դրան հետևել է՝ նույն ծրագրի միջոցով, կոոպերատիվ ստեղծումը: Սկզբում՝ գերիշխում էր թերահավատությունը, քանի որ արտադրական տեխնոլոգիաների վերաբերյալ գիտելիքներ չունեինք, ծանոթ չէինք նաև կառավարման սկզբունքներին: Այստեղ մեզ բախտը ժպտաց՝ հարևան Վրաստանում, Ֆինական կառավարության աջակցությամբ, մեր կոոպերատիվի 4 անդամի համար իրականացվեց ուսուցողական այցելություն ծանոթանալու արդեն փորձառություն ունեցող նմանատիպ կոոպերատիվի գործունեությանը:

Կախեթի կոոպերատիվի փորձը շատ ուսանելի էր՝ գիտելիքներ ձեռք բերեցինք մարքեթինգի մասին, որը կիրառեցինք մեր տնտեսությունում՝ ապահովելով լավ արդյունք:

Երբ ստեղծվեց ջերմատունը, տիկին Լեյլան գիշերները լուսացնում էր այնտեղ: Բույսերը խնամում էր, կարգավորում ջերմությունը: Աճեցրած լոլիկը, վարունգը, պատրաստած պահածոներն արդեն շուկայում ունեին իրենց կայուն գնորդը:

Նա իր փորձը փոխանցում է նաև հարևաններին, բոլոր նրանց, ովքեր ունեին դրա կարիքը: Հպարտանում է, որ արդեն լավ մասնագետ է, և իր արտադրանքն էլ պահանջարկ ունի, չի դժգոհում իր եկամտից: Զգում է, որ շրջապատում բավականին կարևորվում և գնահատվում է իր աշխատանքը:

Կոոպերատիվը, որի անդամներից է տիկին Լեյլան, օրեցօր զգում է նորի շունչը՝ մթերքի ապրանքային տեսքը, իրացման նոր հնարավորությունները: Դժվարություններն արդեն հետևում են մնացել, իսկ արդյունքում՝ իրեն զգում է կայացած ֆերմեր, որ դեռ անելիքներ ունի՝ որքան հնարավոր է ավելացնել եկամուտները, նոր արտադրություն հիմնել և տարածել փորձը:

*Տ. Նազինյան*
*Տավուշի ԳԱՄԿ*

# Առողջության պահպանման միամսյակ

***ՀՀ առողջապահության նախարար Դ. Դումանյանի հրամանով՝ «Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ, հանրապետությունում իրականացվում է կանանց առողջության պահպանման միամսյակ»:***

Գործընթացը համակարգված կազմակերպելու նպատակով, Արագածոտնի մարզպետ Ս. Սահակյանի հանձնարարականով կազմվել է «Բաց դռների օրերի» ժամանակացույց, համաձայն որի՝ մարզի տարածաշրջանային բուժհաստատությունները համագործակցելու են մարզին կցված բժշկական կազմակերպությունների հետ: Հաշվի առնելով, որ միամսյակի ընթացքում հնարավոր է կանանց մեծ հոսք, «Բաց դռների օրեր» ծրագրում ներգրավված են մարզի՝ ինչպես բժշկական կենտրոնները, այնպես էլ ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունները:

Կանանց առողջության պահպանման միամսյակի շրջանակներում, բժշկական ցուցումներով մատուցվող բուժօգնությունը, այդ թվում՝ հիվանդանոցային ծառայությունները, կազմակերպվում են պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում սահմանված կազմակերպական ընթացակարգով:

*Արագածոտնի ԳԱՄԿ*

# ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՎԻՏԱՄԻՆՈԶ



*Գարնանը, երբ բնությունն արթնանում է ձմեռային քնից, իսկ արևն օր-օրի ավելի ուժեղ է փաքացնում, շատերը, բնության զարթոնքից ուրախանալու փոխարեն, որոշակի փկարություն են զգում: Նկատվում է վատ տրամադրություն, քրոնիկ հոգնածություն, դյուրագրգռություն, ինչպես նաև տարբեր հիվանդությունների հանդեպ ընկալունակության բարձրացում: Բացատրությունը շատ պարզ է. մեր օրգանիզմը վիտամինների պակաս է զգում, որն առաջացել է ձմռան ընթացքում: Այս երևույթը կոչվում է գարնանային ավիտամինոզ:*

Ավիտամինոզը հիվանդություն է, որն առաջանում է օրգանիզմում այս կամ այն վիտամինի անբավարարության պատճառով: Գիտականներն ավիտամինոզ անվանում են մարդու օրգանիզմում որևէ վիտամինի կամ վիտամինային խմբի բացակայությունը: Նման բան խիստ հազվադեպ է հանդիպում: Իսկ ընդունված «գարնանային ավիտամինոզ» անվանումը ենթադրում է հենց վիտամինների պակաս (հիպովիտամինոզ), ոչ թե լրիվ բացակայություն:

### *Գարնանային թուլություն*

Գարնանն օրգանիզմի պաշտպանական ուժերը թուլանում են և հնարավորություն չեն տալիս դիմակայել տարբեր հիվանդություններին, որոնք հիպովիտամինոզի դեպքում շատ ավելի դժվար են բուժվում և կարող են ունենալ քրոնիկ բնույթ:

Գարնանը մեծանում է լուսային օրվա տևողությունը, արևի ակտիվությունն ու երկրագնդի մագնիսական դաշտի լարվածությունը: Որպես հետևանք՝ բարձրանում է մարդու նյարդային համակարգի ակտիվությունը, դիտվում է հորմոնների գերարտադրություն: Օրգանիզմն ասես վերակառուցվում է՝ դառնալով զգայուն տարբեր անբարենպաստ ազդեցությունների, այդ թվում՝ եղանակային տատանումների հանդեպ: Այս ամենը բերում է իմունային համակարգի անկման, հենց այդ պատճառով էլ գարնանը նկատվում են վերին շնչուղիների, թոքերի, ստամոքսաղիքային համակարգի բորբոքային հիվանդություններ և ալերգիաներ:

Հիպովիտամինոզն շատ ավելի սպառնում է երեխաներին և ծերերին, ալկոհոլի և ծխախոտի սիրահարներին, հղի կանանց և կերակրող մայրերին, խիստ սննդակարգի սիրահարներին, բուսակերներին ու քրոնիկ հիվանդություններ կրողներին, ինչպես նաև ֆիզիկական խիստ ծանրաբեռնվածություն ունեցող անձանց:

**ՀԱՐԳԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂ,
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԿԱՐՈՂ Է ՏՐԱՄԱԴՐԵԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՁԵԶ ՀՈՒԶՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:**
Հարցերը կարող եք ուղարկել E-mail: asrc@cln.am էլեկտրոնային հասցեին:

## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

# ՕԳՏԱԿԱՐ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՏԻԿԸ

*Սիսեռը քաղաքակրթությանը հայտնի է հնագույն ժամանակներից: Հիմնականում աճեցվում էր Մերձավոր Արևելքում: Բրոնզե դարում այն արդեն հայտնվեց Հունաստանում և Հռոմում: Մատուցվում էր ծիթապտղի յուղով տապակված ու պանրի հետ: Սիսեռի մասին առաջին հիշատակումը հանդիպում է Հոմերոսի «Իլիականում»: 17-րդ դարից սկսած՝ սիսեռը հայտնի դարձավ ամբողջ աշխարհում: Այն Եվրոպայում կիրառվել է նաև որպես սուրճի փոխարինիչ:*

Այսօր շատ տարածված է արևելյան «հումուս» ուտեստը, ինչպես նաև արաբական խոհանոցի «ֆալաֆելը»՝ սիսեռի խյուսից ձևավորած գնդիկները, որոնք տապակվում են այնքան, մինչև խրթխրթան կեղև ունենան: Հնդկական խոհանոցում լայն տարածում ունի սիսեռալյուրը, որից իտալացի խոհարարները պատրաստում են հատուկ տեսակի բլիթներ:

**ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Սիսեռը բակլազգիների ընտանիքից է, հարուստ է սպիտակուցներով ու ածխաջրերով; Սիսեռի հաճախակի օգտագործումն օգանիզմում նվազեցնում է խոլեստերինի մակարդակը: Սիսեռում առկա են օրգանիզմին անհրաժեշտ կալիումն ու մագնեզիումը, իսկ կալցիումն ու ֆոսֆորը նպաստում են ոսկրահյուսվածքի ամրացմանը:

Չհայած սիսեռի ցողունն ու տերևները խոհարարական կիրառություն չեն գտել, սակայն պարունակում են խնձորաթթու, որը նույնպես օգտակար է: Սիսեռը հարուստ է B, A, E և C խմբի վիտամիններով և հանքանյութերով: Օգտակար նյութերի պարունակության շնորհիվ, այն երիտասարդացնող և իմունային համակարգը պաշտպանող, ինչպես նաև սրտային և ուռուցքային հիվանդությունների կանխարգելման հրաշալի միջոց է:

Մասնագետները սիսեռից պատրաստված սնունդ են առաջարկում գեր և շաքարային դիաբետով հիվանդ մարդկանց սննդակարգերի համար: Սննդաբաժնում սիսեռի ամենօրյա կիրառումը կարգավորում է լյարդի, երիկամների գործունեությունը, օրգանիզմը մաքրում թույներից ու խոչընդոտում արյան մեջ խոլեստերինի կուտակումը:



Բացի թվարկվածներից, սիսեռը բարձրացնում է տրամադրությունը: Դեռևս հնում այն կիրառում էին որպես մարսողական խնդիրների ու մաշկի բուժիչ: Մատղաշ ցողուններից թրջոցներով բուժում էին վերքերը, իսկ տերևների թուրմը զարմանալի ազդեցություն էր թողնում մաշկի վրա:

Սիսեռից ինչ-որ բան պատրաստելուց առաջ հարկավոր է նախապես թրջել այն սառը ջրում՝ 8-12 ժամ, ապա լվանալ հոսող ջրի տակ:

Եթե ինչ-որ մեկը զգուշանում է սիսեռ ուտելուց՝ խուսափելով աղիներում առաջացող խնդիրներից, ապա կարելի է եփելու ընթացքում ջրին ուրց կամ կոճապղպեղ ավելացնել: Սիսեռը կարելի է խաշել ու տապակել, ավելացնել ապուրներին ու բանջարեղենին, մսային կերակրատեսակներին: Նույնիսկ երեխաներին է առաջարկվում սիսեռից խյուսեր օգտագործել՝ ավելացնելով մրգի կտորներ կամ մեղր: Իսկ գինու քացախով թրջած սիսեռից հրաշալի աղցան է ստացվում:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմը խորապես ցավակցում է հարազատներին՝ համակարգում մեծ վաստակ ունեցող գործընկերոջ, սիրելի ՀԱՄԼԵՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ մահվան կապակցությամբ:


# ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

## «ԱԳՐՈԼՐԱՏՈՒ» թերթի և «ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի 2014թ. բաժանորդագրությունը



**«Ագրոլրատու» թերթ**

| | |
|---|---|
| 1 տարվա գինը՝ | 3960 դրամ |
| 6 ամսվանը՝ | 1980 դրամ |
| 1 համարինը՝ | 120 դրամ |

**«Ագրոգիտություն» ամսագիր**

| | |
|---|---|
| 1 տարվա գինը՝ | 8100 դրամ |
| 6 ամսվանը՝ | 4050 դրամ |
| 1 համարինը՝ | 1350 դրամ |

**Բաժանորդագրությունն իրականացնում են՝**

Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները, «Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Ապտաշե» կազմակերպությունները:


Ագրոլրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երեւան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն՝ ԱՐԹՈՒՐ ԱՎԱԳՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Լիաննա Շախնազարյան

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 24
ստորագրված է տպագրության 24.03.2014 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երեւան, Մամիկոնյանց 39ա